

**Հայաստանի Հանրապետությունում գործարար
Էթիկայի և համապատասխանության
նախաձեռնության վերաբերյալ**

Հռչակագիր

Մենք որպես Հայաստանի մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, ընդունում ենք, որ կոռուպցիան երկրում շուկայական հարաբերությունների և միևնույն ժամանակ բիզնեսի շարունակական հաջողությունների հիմնական խոչընդոտն է: Թափանցիկ գործունեությունը, էթիկան, ազնվությունը և հաշվետվողականությունը կոռուպցիայի դեմ պայքարի միջոցներ են և ապահովում են հավասար հնարավորություններ շուկայի բոլոր մասնակիցների համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույնով հռչակում ենք.

1. Ընկերության գործունեությունը վարել պատասխանատվությամբ և ճանաչված հակակոռուպցիոն ստանդարտներին և տեղական օրենսդրությանը համապատասխան:
2. Արգելել բոլոր աշխատակիցներին մասնավոր և պետական հատվածների պաշտոնյաների և կազմակերպությունների հետ կատարել կոռումպացված, կեղծ և էթիկային հակասող գործարքներ:
3. Ընդունել թափանցիկ և բացահայտ քաղաքականություն ընկերության գործունեության վերաբերյալ՝ ներառյալ թափանցիկությունը այն անձանց համար, ովքեր հանդիսանում են ընկերության իրական սեփականատերերը:
4. Հարգանքով և ազնվորեն վերաբերվել սեփական աշխատողներին, հաճախորդներին, գործընկերներին և մատակարարներին:
5. Ձեռք բերել էթիկայի կանոնների և գերազանցության վրա հիմնված հեղինակություն:
6. Աջակցել համաժողովրդական նախաձեռնությանը, որն ուղղված է շուկայում արդար պայմանների ստեղծմանը, բիզնես գործարքների թափանցիկության խթանմանը, ինչպես նաև Հայաստանում լավ կորպորատիվ կառավարման սկզբունքների ապահովմանը:
7. Վերը նշված սկզբունքները, հասկացությունները և քաղաքականությունը տարածել ընկերության աշխատակիցների, ինչպես նաև կազմակերպության հաճախորդների, գործընկերների և մատակարարների շրջանակներում:

Մենք ներքոստորագրյալներս, ընկերության անունից հաստատում ենք, որ կարդացել և ամբողջությամբ հասկացել ենք սույն Հռչակագրի բոլոր դրույթները:

Ընկերությունը՝

Ներկայացուցչի ստորագրությունը՝

Ամսաթիվը՝